դունում, որ իրենցից մէկն ու մէկը ինքնակալ ու ինքնակամ իշխանութեամբ հրամայի իրենց» (58)։ Հետեւապէս ո՛րքան ամօթ եւ նախատինք բանական մարդուն, որ թոյլ է տալիս իր նման մէկին՝ իր ուղածին պէս հրամայելու իրեն։

Եւ վերջապէս, հայ եւ օտար պատմութիւններից եւս շատ դասեր ունի նա, դառն ու խրատական դասեր։ Նրան յայտնի է, թէ միապետները, Հայաստանում եւ այլուրեք, ի՛նչ պիսի պատուհաս են եղել ընդհանրապէս եւ ո՛րքան աղէտ ու դժբախտութիւններ են պատճառել իրենց ժողովուրդներին։ Ներոնի եւ Սանատրուկի օրինակները միայն բաւական էին նրան համոզելու, թէ ո՛րքան աղէտաբեր է ինքնակալ միապետութիւնը։

Այս այսպէս լինելով հանդերձ՝ միապետութիւնները, կան եւ գոյութիւն ունեն։ Ինչո՞վ բացատրել։ Ի՞նչն է, որ մարդկանց ստիպում է հանդուրժել անդամ ինքնակալ միապետների գոյութեանը եւ հնազանդել նրանց քմահաճոյքներին, յաճախ մոլի եւ գազանային։ Արդեօք սէ՞րը, յարգա՞նքը, երկրի շահե՞րը եւ մի այլ նման նկատառո՞ւմ։

Հեղինակն աշխատում է այս հարցին պատասխանել եւ պատասխանում է դուցէ շատ ճիշդ — միայն եւ միայն երկիւղը, գլխաւորապէս մահուան երկիւղը։

Ու խորը վշտացած՝ բացականչում է. «Ո՛րքան ծիծաղելի ու խղճալի ես դու, ո՛վ մարդ։ Զէ՞ որ այդ դէպքում մի չնչին կարիճ, մի պիղծ օձ, մի փոքրիկ թոյն կամ մի անմարս կերակուր կարող էին քո թագաւորը լինել, որովհետեւ նրանք էլ կարող են քեզ զրկել քո բնական կեանքից» (57)։

Նրա կարծիքով՝ բռնակալներն էլ շատ լաւ գիտակցում են, որ միմիայն երկիւղն է իրենց գոյութեան ու երջանկութեան խարիսխը. գիտակցում են, որ եթէ վերանայ երկիւղը ժողովրդի սրտից, իրենք կորած են։ Ուստի եւ մի կողմից՝ աւելի են զօրացնում իրենց բռնութիւնները՝ ժողովուրդը սարսափի ու շղթայի մէջ պահելու համար, իսկ միւս կողմից փակւում են բարձրապարիսպ ամրութիւնների մէջ, իրենց շրջապատում են լրտեսների ու զօրքերի բանակներով, որպէսզի ժողովրդի ատելութեան ալիքը չհասնի իրենց։

Բայց լուսնի տակ ոչինչ չկայ յաւիտենական եւ անշարժ։ Ժամանակի ընթացքում թուլանում է ժողովրդին ստրկացնող երկիւղը, թուլանում են շղթաները եւ զանգուածների ցասումն ու ատելութիւնը բարձրանում են այնքան, որ խորտակում են բռնակալներին պաշտպանող մարդկային ու նիւթեղէն պարիսպները եւ ներս խուժում նրանց ապարանքները... Ու քանի՞-քանի բռնակալ իշխաններ — գրում է Շահամիրեանը — «թէ հնում եւ թէ ներկայում, թէ քրիստոնեաների եւ թէ հեթանոսների մէջ ճաշակեցին մահ դառնութեան, ոմանք դեղակուր լինելով, ոմանք քնի մէջ խեղդամահ լինելով, ոմանք որսի ժամանակ սպանուելով, ոմանք էլ անարժանի մէկի ձեռքովը խողխողուելով» (74)։

Այս բոլորից յետոյ՝ մեր հեղինակը, կարծէք, մասամբ ուրախ է, որ Հայաստանը չունի այլեւս թագաւորներ, իշխաններ եւ արքայական գահի թեկնածուներ։ Նա վախենում է, որ հայերը, օտար լծից ազատուելուց յետոյ, մի՛ դուցէ նորից միապետութիւնը որդեգրեն, այն էլ անսահման միապետութիւնը, իրենց ազատագրուած հայրենիքի համար, մոռանալով իշխանների ու թագաւորների երեսից քաշած այնքան նեղութիւնները ու դառնութիւնները։ Դա կը լինէր մի աղէտ, մի անբուժելի անմբտութիւն։

Ու եզրափակում է իր մտքերը ինքնակալ միապետութեան մասին.— «Ատուած չանի, որ մենք յիմարանանք եւ կրկին փորձենք այն, ինչ որ արդէն մէկ անդամ տեսել ենք։ Այլեւս մեր սանձը չտանք ինքնակալ մէկի ձեռքը, որ ճմլի մեր կղակները — ըստ իր կամքի եւ հաճոյքի։ Թոյլ չտանք, որ ինքնակալ մէկը բարբարոսաբար թագաւոր լինի աղանակենցաղ հայոց ազգի եւ Հայաստան աշխարհի վրայ» (36,46)։

Սակայն չմոռանանք փակագծի մէջ աւելացնել, որ այսչափ մոլի հակա-միապետական լինելով հանդերձ՝ Շահամիրեանը յանկարծ չեղւում է իր հիմնական սկզբունքից եւ հաշտւում միապետութեան գաղափարի հետ Հայաստանում։ «Որոգայթ Փառաց»ի Բ. մասում, հակառակ ամբողջ գրուածքի ոգուն եւ օրէնքներին, նա անսպասելիօրէն մտցնում է մի յատուկ օրէնք առ այն, որ Հայաստանի Հանրա-